

գարուց ուխտաւորներէն: Այս մատուռը շատ ժամանակ գոյութիւն ունեցած է, բայց դժբախտաբար չենք կրնար ճշդել. հաւանական է որ շինութիւնը կատարուած է Սաչակրաց ժամանակ. անոնց լուութիւնը այս մասին՝ գուցէ անոնց կողմէ տեղական աւանդութեան անկարեւոր նկատուելուն հետեանքովն ըլլայ: Նոյն իսկ կարելի է որ Սաչակիրներէն առաջ շինուած ըլլայ, բայց կը տարակուսիմ, վասն զի Ժ. Գ. գարուն արդէն Համբարձման լերան վրայ շինուած էր Ս. Աստուածածնի եկեղեցին և կամ աւելի ևս նորոգուած Յուստինիանոսէն: Աւելի հաւանական է որ այս սրբավայրին շինութիւնը եւ զայն յիշատակող արձանագրութիւնը կատարուած ըլլայ այն ժամանակաշրջանին՝ երբ տեղի ունեցան իսլամ և լատին յաջորդական յաղթութիւնները: Ահա փոքր արձանագրութիւն մը որ կը յիշէ ա՛յն փոքր սրբավայրը որ կառուցուած է ըստ արեւելեան աւանդութեան, որուն համաձայն «հրեշտակը երեւցած է Ս. Կուսին ծանուցանելու անոր թէ եկած է իր մահուան ժամը» (Gan. R. T. V. էջ 168-69):

Գրիգոր վրդ. Տաթևացի՝ Ս. Աստուածածնի Համբարձման տեղւոյն վրայ աղօթելուն համար կը գրէ. «Եւ ի ծուներ դնել նմա ի տեղի վերանալոյ փրկչին, ահա ամենայն տունկք ի լերինն խոնարհեալ երկրպագութիւն մատուցանէին նմա» (Տար. Ա. էջ 500):

Նիկողայոս եպս. Ակիւրմանցի 1483ին իր ուխտաւորութեան ժամանակ «Տնօրինական Ս. Տեղիք» ցուցակին մէջ կը գրէ. «Եւ ել ի Գալիլիա (*) ի ժամադիրն

(*) Գալիլիա ըսելով հեղինակը կը հասկնայ Ձիթենեաց լեռան հիւսիսային գագաթը՝ «Աւր Գալիլիացի!» ըսուածը, այսինքն նոյնիսկ այն տեղը ուր աւանդութիւնը ցոյց կուտայ **Հրեշտակին երեւումը:**